ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
18.08.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3-3 գնման պայմանագրի

ք. Երևան <<15>> փետրվարի 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Գրիգորյան Շին>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Գ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշումը և ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 18.08.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3-3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել 2021թ. հատկացված գումարի շրջանակներում կատարման ենթակա աշխատանքների օրացուցային գրաֆիկը և վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածներ N 1-ի և N 2-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածներ N 1-ը և N 2-ը բաղկացած են 1 (մեկ) էջից և համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Գրիգորյան Շին>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ՀՀ, ք. Երևան, Էրեբունի, Մուշական 8փ. տ.92
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1150014101961942
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00481595
Հ/Հ 900011035780	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Գ. Գրիգորյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
18.08.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3-3 գնման պայմանագրի
15 .02.2021 թ. կնքված N 2 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՅԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման 2021թ. հատկացված գումարների շրջանակներում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ

ըստ աշխատանքների տեսակի և ծավալի

N	Կատարվելիք աշխատանքների անվանումը	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների ծավալը (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը*
1	Միաձույլ երկաթբետոնե աշխատանքներ	50 000 000	90 օրացուցային օր

*** Համաձայնագրով նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում օբյեկտում ապաստարանի կառուցման նպատակով Պայմանագրում համապատասխան փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայանագրի կնքման հաջորդ օրը:**

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011035780
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Գրիգորյան Շին>> ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Էրեբունի, Մուշական 8փ. տ.92
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150014101961942
ՀՎՀՀ 00481595

Տնօրեն՝

_____ Գ. Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
18.08.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3-3 գնման պայմանագրի
15.02.2021թ. կնքված N 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	45211231/2	ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքներ	-	-	-	29 414 400	29 414 400	29 414 400	40 703 900	40 703 900	40 703 900	50 000 000	50 000 000	50 000 000	50 000 000

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011035780
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

_____ Ա. Մնացականյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Գրիգորյան Շին>> ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Էրեբունի, Մուշական 8փ. տ.92
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150014101961942
ՀՎՀՀ 00481595

Տնօրեն՝

_____ Գ. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ՔԱՆԱՔԵՌ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ "КАНАКЕР"
"ARMBUSINESSBANK" CJSC
"QANAQER" BRANCH

N 32-102
«11» դեկտեմբեր 2021

Բենեֆիցիար՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե
Պրինցիպալ՝ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ ՍՊԸ

ԵՐԱՇԽԻՔ N E21-000078
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3-3 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 50,000,000 /Հիսուն միլիոն/ ՀՀ դրամ գումարի (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3-3 ծածկագրով կնքվող պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան **1-ը մարտի 2022թ.**:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3-3 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զ. Սարկավագի 72/9; Հեռախոս՝ (+37460) 37 25 32; Էլ.փոստ՝ qanaqer@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: З.Саркаваг 72/9, г. Ереван, РА; Телефон: (+37460) 37 25 32; Эл.почта: qanaqer@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 72/9 Z. Sarkavag, Yerevan, Armenia; Telephone: (+37460) 37 25 32; E-mail: qanaqer@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Խառնվարիչ՝ Հայկ Պետրոսյան

Հաշվապահի պատ.՝ Լարիսա Մակարյան

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ՔԱՆԱՔԵՌ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ "КАНАКЕР"
"ARMBUSINESSBANK" CJSC
"QANAQER" BRANCH

N 32-103
«11» փետրվարի 2021

Բենեֆիցիար՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե
Պրինցիպալ՝ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ ՍՊԸ

ԵՐԱՇԽԻՔ N E21-000079
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/3-3 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 5,000,000 /Հինգ միլիոն/ ՀՀ դրամ գումարի (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքվող N ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/3-3 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրիցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան **1-ը մարտի 2022թ.**:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/3-3 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զ. Սարկավագի 72/9; Հեռախոս՝ (+37460) 37 25 32; Էլ.փոստ՝ qanaqer@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: З.Саркаваг 72/9, г. Ереван, РА; Телефон: (+37460) 37 25 32; Эл.почта: qanaqer@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 72/9 Z. Sarkavag, Yerevan, Armenia; Telephone: (+37460) 37 25 32; E-mail: qanaqer@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կառավարիչ Հայկ Պետրոսյան

ՀԱՄԳ Բաժնի պետ Լարիսա Մակարյան